ԿԱՐԾԻՔ

Նորայր Արտաշի Ավագյանի «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների չափորոշիչները» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության վերաբերյալ

ք. Երևան
26 հունիսի 2023 թվական

Մարդու իրավունքներն առավել հաճախ խախտվում են հանրային հարաբերությունների ոլորտում, որտեղ գործադիր իշխանությունը հակված է իր վարչական կառուցակարգերն ու լծակները ծառայեցնելու գերատեսչական շահերին: Սրանով պայմանավորված՝ առանձին տեսակի վարչական վարույթներում մարդու իրավունքների ու ազատությունների վարչաիրավական պաշտպանության խնդիրը՝ հակասությունների ու բախումների պակաս չունեցող ներկայիս հասարակության մեջ բավականին բարդ է, և դեռևս պահպանվում է այն քաղաքականացնելու, դրանով իսկ անձանց իրավունքներն ու ազատություններն անհարկի խոցելի դարձնելու վտանգը:

Նորայր Արտաշի Ավագյանի «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների չափորոշիչները» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսությունը կառուցված է մարդու իրավունքների ժամանակակից տեսության ակունք հանդիսացող մարդակենտրոնության գաղափարի հիման վրա, որը իրավունքի գերակայության սկզբունքի միջոցով

կանխորոշում է իրավական պետության պոզիտիվ իրավունքի բնույթն ու բովանդակությունը և նվիրված է այդ գաղափարը կոնկրետ բնագավառում՝ առանձին տեսակի վարչական վարույթներում կյանքի կոչելուն և երաշխավորելուն:

Այս համատեքստում հեղինակին հաջողվել է սպառիչ ու ներքին հետևողական տրամաբանությամբ անդրադառնալ ուսումնասիրության նպատակին ու խնդիրներին, հետազոտության նյութ դարձնել ընտրված թեմայի առավել արդիական հարցադրումները և առաջարկել գիտագործնական լուծումներ:

Ատենախոսությունը շարադրված է գիտական պատշաճ լեզվառճով, դրանում հավուր պատշաճի հիմք են ընդունվել շարահյուսական և քերականական կանոնները, որպես կանոն, բացակայում են խրթին մտքերը, բացի այդ, պահպանված են ատենախոսության ձևավորմանը ներկայացվող պահանջները: Ատենախոսության ձևավորումը, կառուցվածքն ու ծավալը համապատասխանում են սահմանված պահանջներին:

Հետազոտության արժեքներից է օտարալեզու և մեծածավալ մասնագիտական աղբյուրների՝ գրականության, միջազգային փաստաթղթերի, ընդգրկուն այլ գիտագործնական նյութի առկայությունը, ընդ որում, հեղինակը ոչ միայն փորձել է իր փաստարկները հիմնավորել կոնկրետ նորմատիվ փաստաթղթերով, միջազգային փորձի արդյունքներով և տեսական աղբյուրներով, բացահայտել է դրանց ուղղվածությունն ու կիրառման գործնական հիմնախնդիրները, այլև կատարել հետազոտության առանձնահատկություններից բխող և արդիական նշանակություն ունեցող պատմահրավական և համեմատական-իրավական առարկայական ուսումնասիրություններ:

Հեղինակն ընտրված թեմայի և դրան առնչվող առավել արդիական հիմնահարցերի առնչությամբ դատողություններ անելիս, դրսևորել է վերլուծական մտքի անհրաժեշտ ինքնատիպություն, ինչպես նաև տեսական աղբյուրներից, օրենսդրական ակտերից և միջազգային իրավական փաստաթղթերից ակնկալվող տեսական խորությամբ օգտվելու և անհրաժեշտ վերլուծություններ կատարելու հմտություններ:

Կարծում ենք, որ հիմնավորված ու ուշադրության արժանի են, ինչպես նաև գիտագործնական նշանակություն ունեն ատենախոսի կողմից պաշտպանության ներկայացված դրույթները: Մասնավորապես, նկատելի է, որ հեղինակի՝ պաշտպանության ներկայացրած առանձին դրույթներ բխում են գաղափարական այն արժեքներից, որոնցով հիմնավորվել է թեմայի հետազոտության հրատապությունն ու արդիականությունը: Օրինակ, երբ հեղինակը առանձին տեսակի վարչական վարույթների զոյաբանական իմաստը պայմանավորում է դրանց կատարելիք երկու գործառույթներով՝ մի կողմից հանրային իշխանության գործառույթների իրականացման արդյունավետությունն ապահովելով և մյուս կողմից անձանց իրավունքների ու ազատությունների երաշխավորված իրացումն ու պաշտպանությունն ապահովելով, դրանով ընդգծում է անձանց իրավունքների ու ազատությունների երաշխավորված իրացման ու պաշտպանության անհրաժեշտությունն ու վերջինիս առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների չափորոշիչ հանդիսանալը, ինչը բխում է մարդու իրավունքների մարդակենտրոն տեսության գաղափարից՝ կարևորելով նաև պետական ու հանրային շահը:

Թեմային առնչով հարցադրումների վերաբերյալ գիտական միտքը զարգացնելու տեսանկյունից կարևորվում են նաև ատենախոսի կատարած եզրահանգումները: Մասնավորապես, վարչական վարույթը կարգավորող օրենսդրությունը երեք տեսակներով /մոդելներով/, իսկ ներպետական օրենսդրությունը երեք փուլերով ներկայացնելը, վարչական վարույթները ընդհանուր իրավասության և մասնագիտացված կամ գործառութավորված վարույթների դասակարգելը և այլն:

Աշխատանքի կարևոր արժանիքներից ենք համարում նաև այն, որ հեղինակի կողմից մշակվել են նաև իրավական հիմքերը բարելավելու վերաբերյալ մի շարք գիտագործնական արժեք ունեցող առաջարկություններ, որոնք կարող են պիտանի լինել համապատասխան օրենսդրությունը կատարելագործելու համար:

Միաժամանակ, կարծում ենք, որ ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ նկատառումները ներկայացնում ենք ստորև.

1) Ատենախոսության «Առանձին տեսակի վարչական վարույթների իրավական հիմքերն ու ներպետական օրենսդրության էվոլյուցիան» վերտառությամբ առաջին գլուխը համեմատաբար նկարագրական է, մասնավորապես, այդ գլխի առաջին պարագրաֆում հեղինակն անդրադարձել է ոլորտի միջազգային իրավական փաստաթղթերին և առանձին անդրադարձել դրանցից յուրաքանչյուրին, սակայն կարծում ենք, որ դրանց առանձին-առանձին անդրադառնալու և դրանով աշխատությունը ծանրաբեռնելու անհրաժեշտություն չկար, այլ աշխատությունն առավել կշահեր, եթե հեղինակը ընդհանրական անդրադարձ կատարեր այդ փաստաթղթերին և ներկայացներ առանձին վարչական վարույթների առնչությամբ դրանց դերն ու նշանակությունը, ինչը և փորձել է:

2) Ատենախոսը կարծում է, որ սկզբունքորեն անթույլատրելի է պարտադիր վարչական բողոքարկման այնպիսի միջոցի գոյությունը, որին դիմելը հանգեցնում է այսպես կոչված «դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության» (Reformatio in peius) սկզբունքի խախտման /տե՛ս էջ 113-114/, սակայն գտնում ենք, որ բողոքարկման վարույթում վարչական մարմինների առաջ նման սահմանափակում դնելը առանց բացառությունների անհիմն է և չի բխում հանրային շահերից:

3) Կարծում ենք, որ ատենախոսության թերություններից է նաև այն, որ հեղինակը առանձնակի տարածում ունեցող առանձին տեսակի վարչական վարույթների, ինչպիսիք են՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի կամ կատարողական վարույթի կարգավորումները չի դարձրել խորը հետազոտության առարկա, ինչով կարող էր վեր հանել գործնականում լրջագույն խնդիրներ առաջացնող այդ հատուկ վարույթների կարգավորումները և դրանց վերաբերյալ փորձեր կատարելու վերլուծություններ ու եզրահանգումներ:

4) Ատենախոսությունում առկա են նաև որոշ վրիպակներ:

Վերը նշված նկատառումներով հանդերձ, բոլոր դեպքերում, անհրաժեշտ ենք համարում նշել, որ դրանք հիմնականում տեսական հարթությամբ բանավեճի բնույթ ունեն, ըստ էության, չեն նվազեցնում կատարված աշխատանքի որակն ու գիտական արժեքը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակած 9 գիտական հոդվածներում, որոնցից 7 հատը՝ ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի գիտական հանդեսներում:

Ամփոփելով հիշյալ ատենախոսության վերաբերյալ դիտարկումներն ու նկատառումները, գտնում ենք, որ հեղինակը կատարել է ծավալուն և արդյունավետ աշխատանք, այն աչքի է ընկնում ինքնուրույնությամբ և պահանջվող աստիճանի ինքնատիպությամբ: Հեղինակի աշխատությունը պատրաստված է ատենախոսության ձևավորման պահանջներին համապատասխան: Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Այսպիսով, Նորայր Արտաշի Ավագյանի «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների չափորոշիչները» վերտառությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այն համապատասխանում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով սահմանված ատենախոսությանը ներկայացվող պահանջներին: Հեղինակը ցուցաբերել է գիտահետազոտական-վերլուծական անհրաժեշտ ընդունակություններ, կատարել է բազմակողմանի հետազոտություն, ներկայացրել է պատշաճ մակարդակով գրված, տեսական ու գործնական զգալի նշանակություն ունեցող աշխատանք, որի համար կարող է շնորհվել ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք –

սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀԱՍՄԻԿ ԵՆԳՈՅԱՆ

26 հունիսի 2023 թվական

Պաշտոնական ընդդիմախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հասմիկ Ենգոյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԻԿՅԱՆ

26 հունիսի 2023 թվական